

քաղաքական հրահանգաց եւ վարչութեան եւ պաշտամանց ինչ եւ անուանցն իսկ փոփոխել կամ ներամտել, եւ հաստատութիւն առնուլ հին եւ նոր կարգաց. գորս մշտարթուն աչալրջութեամբն եւ ժրութեամբ՝ յարդարէր Լեւոն, ինքնին եւ հաւատարմօքն եւ գիտնօք ոմամբք, առաջի աչաց ունելով զԱսսիգս Երուսաղեմի թագաւորութեանն. եւ ըստ պատմչին, «Ուր եւ իմանայր թէ գոյ այր պիտանի՝ ՚ի գործ ինչ եւ աջողակ, առաքէր եւ կոչէր խոստմամբ, եւ բերեալ հանգուցանէր առատաձիր պարգեւօք»: Նա եւ ոչ միայն ազգայինք՝ այլ եւ օտարազգիք՝ մանաւանդ Փռանկ իշխանք եւ զօրականք՝ ինքնական յօժարութեամբ դիմէին ՚ի ծառայութիւն նմին, ականջալուրք եւ ականատեսք գոլով մեծի համբաւոյ նորա, զօրութեանն եւ փառաց, գորս կրկին արտափայլեցոյց թագն արքունի, եւ սերտեաց ՚ի նա զսիրտս բազմաց. եւ թուէր իմն տեսանել ընդ բովանդակ սահմանս տէրութեանն՝ սփռել ճաճանչս լուսաւորս եւ կենդանացուցիչս ՚ի նորոգութիւն, ՚ի շինութիւն, ՚ի բարգաւաճանս ազգի ազգի հնարից եւ հայթայթանաց, արուեստից եւ ուսմանց, քաղաքական, եկեղեցական եւ վանական կարգաց. յոր ոչ սակաւ սատար լինէր զառաջինն՝ եւ պատկառելի ծերութիւն եւ պարթեւական զարմն կաթողիկոսին Գրիգորի Ապիրատի: Ամենեցուն այսոցիկ ըստ իւրաքանչիւր պիտոյից ՚ի թիկունս հասանէր ամենահասն Լեւոն, թեպէտ անձամբ թեպէտ ՚ի ձեռն պաշտօնէիցն. ոչ պակաս քան զպերճութիւն իւր ՚ի վերայ եօթանասուն եւ երկու բերդատեարցն պարոնայց՝ տարածանելով զխնաման՝ եւ «՚ի վանորեայս եւ յուխտեալ տեղիս», ըստ պատմչին: Քանզի գիտելով զմեծ օգուտ եւ ազդումն կրօնական տանց՝ ՚ի բարոյական բարգաւաճանս ազգին, միանգամայն եւ ըստ հայրենի բարեպաշտութեանն, զի ոչ փառասիրութիւն, ոչ երկրակալութիւնքն եւ ոչ որ յայն սակս կիրք եւ առաւելագանց երբեմն նախանձ, ոչ շիջուցին ՚ի նմա զհաստատութիւն հաւատոցն եւ զպաշտօնասիրութիւն. այլ միայն ընդ թագաւորական պերճութեանն եւ ընդ մեծոգի առատութեանն՝ յաւելոյր ՚ի հոգեւորսն եւ զմարմնաւոր հանդիսից ճոխութիւն. որով, ասէ պատմիչն, «զարդարեաց զտօնս Զատկաց (որպէս տեսաք եւ զՅայտնութեանն Տեառն) մեծահանդէս ժողովով եւ մեծաձախ սեղանով». ոչ այնքան ինքն յինքեան խնդալով՝ որքան ՚ի խնդացուցանելն զայլս:

Թեպէտ եւ չէ յայտնապէս գրեալ ժամանակագրաց զայս ինչ կամ զայն գործոց եւ շինութեանց նորա, այլ երեւի առանձինն ուշ եղեալ, նախ,